

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուրլի կէս տարվանը 6 բուրլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն).

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԻՍՏԻԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ
գաւառից.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցող-
դի օրագիրը. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Գերմանական նոր քաղաքականու-
թիւնը և համախառնութիւնը. Նախկին Պարս-
կաստանից.—ՀԵՐԱՆԻՍԻՆ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Մեր եկեղե-
ցական ուսումնարանների պատմութիւնից:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կաղաւթել, կարկատել, վերանորոգել—
ահա այն բառերը, որոնք հոգի ու մար-
մին ստացած պէտք է նպատակն Նախի-
ջկանի գաւառին և Շարուրին դարձա-
նելու իր վերջերը և նորից հաստատելու
կանոնաւոր կեանք Արաքսի աւազանի
այդ շրջաններում:

Ահաբեկված ժողովրդի մէջ շատ կան
հիւանդներ: Թէ սարսափի և թէ զըր-
կանքների ազդեցութեան տակ տկարա-
ցած ազգաբնակիչները կարօտ է բժշկա-
կան և առողջապահական օգնութեան:
Յիշի կանանց մի մասի վրա սարսափները
ծանր են ազդել և պատճառ դարձել
դժբաղդ դէպքերի: Վատ մտունդի պատ-
ճառով երեխաները ենթարկվել են տկա-
րութիւնների:

Տները կարկատել և վերանորոգել
կատարվում է ոչ մեծ արագութեամբ:
Շատ տներում չը կան դռներ, լուսա-
մուտքներ, դարակներ, աթոռներ և զա-
նազան անօթեղէններ: Ժամանակ է հար-
կաւոր մինչև որ իրանք գիւղացիները
կամ յատուկ վարպետները կարգի կը բե-
րեն աւեր տները:

Երկրագործական գործիքներ հայթայ-
թելու համար կազմվեց այս օրերս Թիֆ-
լիսում մի յատուկ յանձնաժողով, որի
գործունէութեան մասին կը հաղորդենք
տեղեկութիւններ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԵԿԵՆԵՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

VI

1897 թւի յունիսի 2-ին նոր բարձրագոյն
հրաման է լոյս տեսնում, որով մեր եկեղե-
ցական դպրոցները «ենթարկվում են ժողո-
վրդական լուսաւորութեան Միութեամբի
անհրաժեշտը՝ նոյն Միութեամբի ան-
հրաժեշտ տակ եղած միւս տարրական
դպրոցներին ընդհանուր հիմունքով»: Այս օ-
րէնքի հայտարարութեամբ հաստատուե-
ցան եկեղեցական դպրոցները առանձին հաստա-
տութիւններ, անշտա մարմիններ չէին, այլ
ծիսական եկեղեցիների գործունէութեան մի
շրջանը, մասը. իսկ միթէ հնար բան է
գործողութիւնը, ֆունկցիան, անկախ ըստ
նի գործողից և ենթարկել մի այլ մարմնի:
Սակայն կարելի է խափանել առ մի գործո-
ղութեան հաստատութիւնը. և 1897 թւի
օրէնքի իմաստը իրականում հէնց այդ կարող
էր լինել: Այդ օրէնքով վերջ գրվեց մեր եկե-
ղեցական դպրոցների գոյութեանը, և մեր ե-
կեղեցին իսպառ զկվեց սեփական դպրոցներ
ունենալու և անկախ վարելու իր նուիրական
իրաւունքից:

Այս է մեր եկեղեցական դպրոցների «մար-
տիրոսական վարուց վկայաբանութիւնը», որ
համառօտակի ընդհանուր գծերով յարմար
համարեցի թարմացնել մեր հաստատութեան
կողմնութեան մէջ:

Եթէ 1897 թւի օրէնքից յետոյ էլ մի քանի
դպրոցներ գնա էին, գոնէ պաշտօնապէս, հա-
յոց եկեղեցական դպրոց» են կոչվում, այդ
լոկ թիւրքմացութիւն պէտք է համարել, որ
սակայն իր յետին միջոց ունէր: Պարզ է որ

Օրդուրութիւն և Ազգութիւնը ստացված
լուրերը տեղեկացնում են, որ նոր բար-
դութիւններ առաջ չեն եկել: Սակայն
մասնաւոր հեռագրական աղբիւրները ցոյց
են տալիս, որ գիւղերում դեռ երկու-
ր և կասկածը չեն անցել: Միութեամբի
է արձանագրել, որ այնտեղ եղած գործը
աշխատում է շտապով այցելել խառնա-
կութիւն ծագած տեղերը և այդպիսով
բարդութիւնների առաջն առնել:

Ուսելու պաշարները դեռ թանգ են:
Չը նայելով, որ հոռեւը սկսվել է և շու-
կայում երևացել է նոր հացահատիկ, այ-
նու առնալիս ցորենի և ալիւրի գները
բարձր են: Չաղացի յաճախելը այնքան
էլ ապահով չէ և առաջիկայ բերքի մա-
սին էլ դեռ ապահովութիւն չը կայ, որ
աւրոյշովին և անձնաս կը մտնէ գիւ-
ղական շտեմարանները:

Կարսից, Արաքսիայից ստացված լու-
րերը ցոյց են տալիս, որ այնտեղ մա-
նիպականների մէջ նկատված անհանգիստ
տրամադրութիւնն անցնելու վրա է: Նը-
րանք համոզվեցին որ հայերի կողմից ոչ
մի յարձակում, ոչ մի ներգործական
նպատակ չեն ծրարված եղել:

(Հեռագրով)

Նախիջկան, յուլիսի 2-ին, ժամը 1-ին և 20
րոպէին ցերեկայ:

Թմբուլ գիւղի հայկական թաղի հրա-
ցանաձգութեան ենթարկվելը թուրքերից,
դաշտերի ցորենի հունձի կողոպտվելը,
գիւղեր ժամանակ Չահուկի յոյճայն հրա-
ցանաձգութեան ենթարկվելը և նրա դաշ-
տերից դուրս եկած արդիւնքների յաճա-
խակի հրացանաձգութեան ենթարկվելը,
զօրքի շրջագայութեան բացակայութիւնը
դաշտերում, հացի փոխադրութեան ուղեկ-
ցող կողակները վրա յարձակվելը և նը-
րանց վիրաւորելը, Չահուկից 6—7 վերստ

անհեթեթութիւն է «եկեղեցական» անուանել
մի դպրոց, որ եկեղեցու հետ իրօք ոչ մի
կապ չունի, այլ ամբողջովին կախած ու
ենթարկված է պետական Ուսումնարանական
Վարչութիւնից: Սակայն Կովկասի Ուսումնա-
րանական Վարչութեան նպատակը միայն այն
չէր, որ մեր եկեղեցին զրկել Ռուսաստանում
սեփական դպրոցներ ունենալու իրաւունքից
(որով ասպարէզից վերանում էր նոյն Վար-
չութեան մրցակիցը), այլ նաև այն, որ նոյն
դպրոցները պահող միջոցները, արդիւնքներն
էլ իրան, Ուսումնարանական Վարչութեան,
ձեռքն անցնէին: Ուսումնարանական էր այդ
դպրոցները գոնէ անուանական «եկեղեցական»
կոչել, որպէս զի եկեղեցական արդիւնքից
օգտվելու գոնէ անուանական հիմք լինի:
Իրաւախնդրականից յետոյ այժմ պատմու-
թեան շահախնդրական շրջանն էր սկսվում:
Եւ ահա, նոյն Կովկասի Ուսումնարանական
Վարչութեան ջանքերով, Միութեամբի Կոմի-
տէն 1898 թւի մարտի 26-ին մի կարգադրու-
թիւն է անում, թէ ժողովրդական լուսաւո-
րութեան Միութեամբի տեսչութեանը
յանձնված հայոց եկեղեցական դպրոցներին,
իբրև իրաւաւորական անձերին, պատկա-
նած ունեցվածքը նոյն Ուսումնարանական
Վարչութեան պէտք է յանձնվի: Դարձեալ
մի թիւրքմացութիւն: Մեր եկեղեցական
դպրոցները առանձին մարմիններ, իրաւաւո-
րական անձեր չէին, ուստի նրանց ոչինչ,
իբրև իրաւաւորական անձեր, չէր պատկա-
նում, պատկանել չէր կարող: Առաջ, մինչև
այս դէպքը օրէնք մեկնորդն էր, գործողութիւն
էլ աղմկիստարարութիւն (վարչական) իշխանու-
թիւնն էր, բերկրատախան, որ իր ցանկա-
ցածի համեմատ էլ մեկնում ու գործադրում
էր օրէնքները առանց որ և է խոչնդոտի հան-
դիպելու: Իսկ այժմ, քանի որ 1898 թւի
կարգադրութիւնը չէր արգելում դատարանի
դիմել՝ ապացուցանելու համար թէ այս ինչ

հեռաւորութեան վրա գէնքերի խելը և
յուրիսի 1-ին Սուլթան-բէգի վրա յար-
ձակումն, անհանգստութիւն պատճառեցին
հայերին: Մեծ դժուարութիւններով խոս-
տանալով հայերին երաշխաւորութիւն
կեանքի ապահովութեան և նրանց յափշ-
տակած իրերի անյապաղ վերադարձման
համար, մենք կարողացանք նրանց վերադար-
ձնել գիւղերը: Ինկատի ունենալով, որ գիւ-
ղերում անկարելի է լինում դաշտային աշ-
խատանք կատարելը, գիւղացիները նո-
րից հաւաքվում են քաղաքներում և չը
կողոպտված գիւղերում: Թմբուլում մնա-
ցել են միայն 5—6 հայ ընտանիքներ:
Վերջիշեալը հեռագրված է նաև պրինցին:
Թովմա վարդապետ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳՈՒՄՈՒՅ

Վ Ե Ր Ի Ն-Ա Ղ Ո Ւ Ն Ի, 25 յունիսի: Ազգութե-
4 մասաղահաս երիտասարդներ Թիֆլիսից ճա-
նապարհվում են դէպի Ազովի Նարբաղի
վրայով, 18 օր շարունակ ջուր ու հրից անց-
նելով վերջապէս յունիսի 22-ին հասնում են
Ազովիսից 5—6 վերստ հեռաւորութեան վրա
գտնված Նուսնուս թուրքաբնակ գիւղը, որ-
տեղ դրանց բռնում են կողոպտում և կամե-
նում են սպանել: Գրէհտարը, որը Կաւր գիւ-
ղացի մի կործն երիտասարդ էր, երկու տեղից
վերջ ստացած, ինչ ինչ հնարքով հազիւ կա-
րողանում է հասնել Ազովիս և յայտնել ի-
րանց գիւղով անցած դէպքը և ընկերների
դաւն վիճակը: Ազովիսից 7 պրաստուն կա-
զակներ մի ձիաւոր հայի ուղեկցութեամբ
հասնում են վառնգի տեղը և հայ տղերքին
ազատելով բերում են: Տղայից պատմելով,
սպանութեան առաջն առել է տեղական սէյի-
դը: Այսօր յիշեալ դէպքի առթիւ Օրդուրագից
պրիստաւը գալով Ազովիս, կանչեց Նուսնուսի
աղախակներին և պատահած դէպքը ըննե-
լով ստորագրութիւն առաւ, որ կողոպտու-
ածը շուրջվին յետ դարձնել (մի ձի, հաշուա-

գոյրը դպրոցապատանի չէ և Ուսումնարանա-
կան Վարչութեան յանձնվելու չէ, ուստի դա-
տարանի էլ դիմեցին: Եւ պետութեան դատա-
ւանը, ի պատիւ իր արգաւադատութեան,
զրկեց ըրոր դէպքերում հաստատեց այն ի-
րողութիւնը, որ մեր եկեղեցական դպրոցները
սեփականատէր չէին (քանի որ հէնց իրանք
իսկ եկեղեցիները սեփականութիւնը, պատկա-
նելին էին): Շահախնդրական ունեւորութիւն-
ները սակայն սրանով բնաւ չը սանձահարվե-
ցին, այլ լոկ իրանց արշաւանքի հասցէն փո-
խեցին: Եթէ ունեցվածքի սեփականատէրը
դպրոցը չէր, այլ նոյն ինքն եկեղեցին, ապա
պահանջն էլ եկեղեցուն պէտք էր ուղղել:
Այսպիսի «բնական» ընթացքով դպրոցները
զրաւելու ձգտումը եկեղեցու գոյրը գրա-
ւելու դիտաւորութիւնն առաջ բերեց, որի
հետեւեց 1903 թւի յուլիսի 12-ի Բարձ-
րագոյն կարգադրութիւնն եղաւ: Յայտնի
է, որ այս կարգադրութիւնը երկու հիմնա-
կան մասերից է բաղկացած. այն է՝ ոչ միայն
եկեղեցապատկան ըրոր գոյրը կառավարե-
լու իրաւունքից և զրկվում մեր եկեղեցին,
այլ, սրա սեփականատէր մնալու սկզբունքին
հակառակ, իրաւունք էր տրվում որ ժողո-
վրդական լուսաւորութեան միութեամբը մեր
եկեղեցու գոյրից ու եկամուտներից վերցնէ
իր դպրոցների համար այնքան, որքան հար-
կաւոր կը դառնէ դրանց պահելու համար: Եւ
թերեւ հէնց այս երկրորդ մասը առաջինի
անմիջական շարժառիթը եղած լինի: Սակայն
խօսքս այս անգամ եկեղեցապատկան գոյրերի
զրաւման մասին չէ, այլ մեր դպրոցների մա-
սին:

Մի նրբազգաց ծանրաշփի նման՝ մեր ե-
կեղեցական դպրոցները իրանց վիճակի վրա
արտացոյցել են վերջին տասնամեակների բա-
ղաբանութեան ու կառավարութեան ոգու
փոփոխութիւնը: Այժմ՝ երբ ազատատէնչ շար-
ժումը ամբողջ ազգաբնակչութեան ըրոր խա-

տեղէն, փող և հրացաններ). երկու օր ժա-
մանակով թուրքերը քմծծաղ տալով հեռա-
ցան, երկու օր դարձաւ 4 օր, բայց դեռ չեն
վերադարձրել: Վերադարձաւ բժշկվում է,
վերքերը թիթե են:

Այսօր, յունիսի 25-ին, ժողովուրդը յուզ-
ված դրութեան մէջ էր, շուկայում թուրքի և
հայի խօսակցութիւնը սուր կերպարան էր
ստացել, չարամիտ մարդիկ յուզում և պղտո-
րում են խաղաղ ժողովրդեան մտքերը:

Եթէ այսպէս շարունակվի անտէր ու ան-
պաշտպան մնացածները կամայակամայ կը
դիմեն պանդխտութեան, որը կըրկնա-
կի դժբախտութեան և երկրի քայքայման
լայն ճանապարհներից մէկն է. այդպիսի մի
սխալ քայլի առաջն պէտք է առնել: Ճաւում
ենք որ այսպիսի անապահով ժամանակնե-
րում դեռ շատ ու շատ հայեր իրանց կողակ-
ների ետեից ընկած շարունակում են մնալ
օտարութեան մէջ. միթէ այս ամիսներ շա-
րունակվող աղէտալի լուրերը չեն լսել նրանք,
գոնէ այն մի քանի խումբ երիտասարդներից
օրինակ առնեն և թողնեն ամեն գործ, գան
պաշտպանելու իրանց ընտանեաց պատիւը և
տարիներ շարունակ աշխատած կայքն ու կա-
րողութիւնը:

Նախիջկանի գաւառի Չնաբերդ գիւղից մեզ
գրում են. Աղէտը մեզ էլ հասաւ և թէն այժմ
անցել է, բայց կորուստներս յետ չենք
ստացել: Դեռ յունիսի 10-ին Չնաբերդու խա-
ները և ըրոր թուրքերը դուրս եկան գիւղից,
տանելով իրանց հետ իրեղէնները և ապրանքը
իրանց մօտիկ թուրքերի գիւղը: Յունիսի
13-ին առաւօտը վաղ թուրքերը սպանեցին,
բոլորովին միամիտ, Չնաբերդու երկու հո-
վիւններին, որոնցից մէկի աջ ձեռքը կարելի
է նոյն թուրքերը քշել տանում էին մօտ 700
գրուս ոչխար: Չնաբերդից, իմանալով այդ,
թափվեցին գնացին ոչխարը յետ խելու թուր-
քերից, բայց հաստատ լուր չունենալով, բո-
լորովին հակառակ կողմն էին գնացել, միայն
գիւղացիներից 4 հոգի գնացել էին Վարմիր

ւերում այնքան խորացել, այնքան վարարել
է, տարակոյս չը կայ որ լաւագոյն կարգե-
րի, ազատ միջոցների առաջ դաւը և տերա-
պիսիւն լոկ ժամանակի, այն էլ շուտահաս
ժամանակի հարց է: Տարակոյս չը կայ, որ
մեր ըստ ամենայնի արդար և իսկապէս
համեստ ու չափաւոր պահանջները վերջա-
պէս գոհացրած ստանալու են: Բոլոր հայե-
րիս բուռն ցանկութիւնն է, որ վերացվեն
այն բոլոր անարդար ու անտեղի արգելքները,
ճնշումները ու սահմանափակումները, որոնց
միակ պատճառը վերջին տասնամեակների
նեղսիրտ ու կարճատես իշխանաւորների կա-
կածախտ քաղաքականութեան նախանձառ ու
չարամիտ ոգին է եղել: Յատկապէս եկեղեցա-
կան դպրոցների նկատմամբ հայերիս ցանկու-
թիւնն է, որ հայոց եկեղեցին յետ ստանայ
սեփական դպրոցներ անկախ վարելու իր ու-
նեցած իրաւունքը: Նոր Փոխարքայի օրով թող
մեզ յետ արվին այն իրաւունքները, որ ու-
նէինք նախկին փոխարքաների օրով, փոխա-
րքաների, որոնց անունները (իշխան Վօրոնցով,
Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիւի) հետ են
կապված ուսաց կառավարութեան Կովկասում
կատարած գործունէութեան պատմութեան
լաւագոյն էջերը: Թող ընդ միշտ վերացվի
1884 թւի ճնշող օրէնսդրութիւնը, որ բնական
ընթացքով իր յետագայ սահմանափակող դար-
գացմամբ (1886 և 1889 թւի) մեր դպրոցների
փակումը առաջացրեց (1897 թւին): Թող ա-
ռանց յետաձգվելու առաջիկայ սեպտեմբերին
անարգել բացվին մեր դպրոցները դռները,
բացվին ազատ հողի վրա, առանց արգելաւիժ
միջամիջոցների Կովկասեան Ուսումնարանա-
կան Վարչութեան կողմից: Թող բացվիլը ե-
կեղեցական դպրոցները հէնց սկզբից և եթ
այնպիսի անկախութիւն և ինքնուրոյնութիւն
ստանան, որ ապահովապէս հեռու լինեն ան-
ցաւ տառապանքներից և դժբաղդ փակումից:
Սիրական Տիգրանեան

քարի» կողմը, որտեղ տեսնուած են հետեւեալը— մօտ երկու հարիւր ձիաւոր թուրքեր քըշուած են ոչխարը, տեսնելով որ ոչ հեռու առաջնութեամբ է գիւղի տաւարը, վրա են հասնում տաւարը երկու մաս անում, մէկ մասը ըշում են ոչխարի հետ, իսկ միւս մասը առանձին են ըշում:

Այդ չորս գիւղացիներէ մէկը—Մարտիրոս Յովհաննիսեանը գալիս է գիւղը և լուր է բերում, որ թուրքերը տանում են ոչխարը և տաւարը: Գիւղացիք իսկոյն կողակներէ հետ հասան այն ժամանակ, երբ տաւարի մէկ մասը ոչխարի յետ ըշել տարել էին բոլորովին հեռու թուրքի գիւղը—Լարաբաղլար, իսկ միւս մասը դեռ մօտ էր: Գիւղացիք և կողակները թուրքերի հետ ունեցան մեծ հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանված են 6 թուրքեր և մէկ վիրաւոր, հայերից միայն մէկ վիրաւոր է: Տաւարի մնացած մասը գիւղացիները յետ խըլեցին: Ոչխարը բոլորը տարան, իսկ տաւարից 136 հատ:

Սուրմալուի գաւառի Մօլլադամար գիւղից գրած մի մամուլը նամակից բաղում ենք հետեւեալը. «Մի քանի օր սրանից առաջ մեր «Մօլլադամար» գիւղի բնակիչները սաստիկ վախեցան այն լուրից, որ թուրքերը պատրաստվում են փչացնել իրանց գիւղում գտնվող ջրի բանդը և հէնց դրանով մեզ զրկել ջրից:

Մեզ այդ տեղեկութիւն հաղորդող աւելացնում էր նաև, որ թուրքերը մտադիր են այդպէս վարվելու, որպէս զի յարմար առթից օգտվին յարձակվելու մեզ վրա և բոլորիս կոտորելու: Այդ մի և նոյն ժամանակ նա մեզ գտնադրեցինք և քանկանում, չէր գնաք բանդի մօտ ջուր բաց թողնելու: Ճիշդ նոյն մտքով էլ այդ մի և նոյն տեղեկութիւնը մեզ հաղորդեցին և Կողբ գիւղի բնակիչները: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, մեր գիւղացիները ժողով կազմեցին և որոշեցին երբէք չը մօտենալ բանդին, եթէ թուրքերը կը փչացնեն այդ:

Եւ յիշուի երկու օրից յետոյ այդ լուրը կատարելապէս ճշգրիտ: Մեր ազգաբնակչութիւնը կրիտիքական դրութեան մէջ էր գտնվում: Մեր դաշտերը մնացել էին առանց ոռոգվելու, իսկ մարդիկ և անասունները առանց ջրի: Յուսանալով ջրի կատարելաբացակայութեամբ, գիւղի ազգաբնակչութիւնը վերջապէս ստիպված եղաւ գնալ բանդի ուղղութեամբ, որպէս զի գիւղի համար ջուր բաց թողնի:

Երբ մեր գիւղացիներէ մօտ 40 հոգի մօտեցան բանդին, նկատեցին 15 թուրք, իսկ նրանց հետում լեռան դագաթի վրա թուրքերի մի ահագին խումբ էր: Մեր գիւղացիները երկիւղից բանդը դեռ չը կանխաւորած, մի քանի խմբերի բաժանվելով, սկսեցին վերադառնալ տուն, ուղարկութիւն չը դարձնելով թուրքերի յիշոցի վրա:

«Նաբարա-Պարզնիս» թրքական գիւղի մօտով անցնելով մեր գիւղացիները նկատեցին մօտ 200 թուրքի մի խումբ հետ միասին, որոնք դառնալով մեր համագիւղացի հայերին, ասացին. «Եկէ՛ք մտէ՛ք մեր մզկիթը և բացատրեցէ՛ք մեզ, թէ ինչու վերադառնում էք տուն և ո՞վ է աղբիւրի բանդը զննել, որպէս զի մեր գիւղը ջուր չը մանի»: Մեր գիւղացիները ցանկանալով խոսափել նրանց հետ ընդհարվելու, պատասխանեցին նրանց, որ իրանց կարծիքով բանդի փչացման պատճառը «Ալիկոսա» միւս գիւղի բնակիչներն են: Հէնց այդ ժամանակ թուրքերը սկսեցին հայոյն մեր գիւղացիներին և ասացին. «Դուք շնորհ սուա էք խօսում:» Տեսնելով թուրքերի զոգոված դրութիւնը, մեր գիւղացիները լուրջեանք շտապեցին վերադառնալ տուն:

Այս թէ ինչ դրութեան մէջ ենք մենք գտնվում: Վտանգը մեծ է յարատեւ է: Մեր հայերի ճշգրտութեամբ և հաւածված դրութիւնը հետզհետեւ աստիկանում է նաև նրանով, որ այստեղից ու այնտեղից շարունակ լուր ենք ստանում, որ թուրքերը նկատելով հայերին իրանց դաշտերում աշխատելիս, ասում են նրանց. «Հայեր, ինչու համար էք աշխատում, չարչարվում դաշտերը հերկելով, երբ դրանք վերջի վերջոյ մեզ պէտք է պատկանեն»:

Ասան կողմից մենք շուրջապատված ենք թըշնամիներով: Մեր գաւառը ունի մօտ 48 թուրքական և քրդական (Չալալիներ) գիւղեր: Բացի դրանից մեր գաւառում կան և բազմաթիւ թափառական բրդեր, որոնք յայտնի չէ, թէ որտեղից են եկել այստեղ: Նրանց ամբողջ ոյժը հետեւեալն է.

1), բզնիկները ունեն շէյխաւանդները և 100 վրան 2) չիւանցիներ 50—60 վրան, 3) Ալաշըք բէգ, որ իր բրդերով ահա չորս տարի է մեր կողմերից հեռացել էր, այժմ այստեղ կրկին երևան է եկել 4), սահմանադիր մօտ «Գիւրիկ» սարի վրա այժմ բուն է դրել իր բրդերով Համիդ-բէկը, որ յաճախ յարաբերութիւն ունի թուրքական բրդերի հետ և հէնց Թիւրքայից էլ լուրջ վտանգ է սպաւում: Բացի դրանից շարունակ դէս ու դէն թափառող քրդական ցեղերը հետեւեալներն են, 1) գաւառուրցիներ, 400 վրանով, 2) մոթիւնցիներ 50—60 վրանով, 3) բաղիկցիներ Ալտէ Ծախիւի առաջնորդութեամբ 40—50 վրան, 4) կողբեանցիներ 50 վրան, 5) Չալալի-սալիկցիներ 100 վրան, 6) բարօեանցիներ 60 վրան, 7) ցիկցիներ 40 վրան: Նորից կրկնում եմ, որ մեզ ամենաուրջ վտանգը սպաւում է Թիւրքայից, ուր Ալաշըք և Համիդ բէկերը օր ու գիշեր ագիտացիտ են անում: Մեր գիւղացիները յուսահատվում են և պատրաստվում են թողնել իրանց բնակավայրը: Զրի այդպիսի յարաբերութեան պատճառը տանուէրն է, որ ամեն կերպ արգելեց մեզ միջոցներ ձեռնարկելու մեր գիւղի համար ջուր հայթիկութիւն համար, խոստանալով, որ ինքը այդ մասին կը հոգայ: Բայց մինչև այսօր էլ նա իր խոստումը չը կատարեց և մենք նստած ենք առանց ջրի»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XXVI

Հասարակական աղէտը նախ և առաջ մի փորձաքար է այդ հասարակութեան առաջաւոր անուանված մասի համար: Հասարակական աղէտը գալիս է հարցաքննելու՝ ունի՞ արդեօք հասարակութիւնը տոկուն, բարեխիղճ, գործող տարրեր:

Նախիջևանի դժբախտութիւնը այդպիսի մի հրապարակական հարցաքննութիւն է: Զարհուրելի մի աղէտ, որ մի քանի օրում առկա էր մեր արաւ ամբողջ մի գաւառի կեանքը, աւերակներ կոյտ դարձրեց ու մի անգամից հրապարակ նետեց մէկը միւսից ցաւալի, մէկը, միւսից անյետաձգելի կարիքներ: Բաւարարութիւն տալ այդ կարիքներին անմիջապէս—նշանակում է ոտքի կանգնեցնել, կենդանութեան շունչ տալ մի կիսամեռ, մերկ ու անապաշտան ժողովրդի:

Եւ ահա անեղ հարց է առաջարկվում—հասարակութիւնը ունի՞ պատրաստութիւն այդ տեսակ մի փրկարար առաքելութիւն կատարելու համար:

Եւ կենքք, մեր մեռած ու անապատացած կեանքը պատասխանում է որ չունի:

Արնաքաւ ժողովրդին միայն բժշկական օգնութիւն չէ հարկաւոր:

Ուզում ենք աղբեցնել մեռնողներին, միայն մեր տեղերն ու առողջապահական խրատները բաւական չեն: Մահից ազատվածը դեռ բոլորովին նորմալ մարդ չէ. նրան հարկաւոր է ապրել ոչ իբրեւ տեղերի կարօտ հիւանդ, այլ իբրեւ անհատ, իբրեւ ընտանիքի հայր:

Հարկաւոր է, բացի բժշկական խնամքից, և տնտեսական խնամք:

Բարեգործութիւնով, որքան էլ անասելի առատ լինէր, չէք կարող ապրեցնել այդ ահագին բազմութիւնը, տանտեսակ հազարով մարդկանց: Դուք պէտք է կարողութիւն տաք, որ անտեսապէս հոգեվարք մարդը ինքն էլ կարողանայ իր համար միջոցներ գտնել իսկ միջոցներ գտնելու գործում առաջին անհրաժեշտութիւնն է, որ այդ մարդու օրինական իրաւունքները վերականգնվեն:

Երբ դուք կը վերականգնէք այդ իրաւունքը, այն ժամանակ դժբախտացած մարդը կարող է և պահանջել, որ իրանից կողոպտած հարստութիւնը, կարող վերադարձնեն, և իր դժբախտութեան պատճառները գտնել, և յանցաւորներին պատժել տալ և այլն:

Ինչպէս անել այդ, և միթէ իրաւունքներ վերականգնելը ձեր ձեռքին է:

Այո, այստեղ էլ կարևոր է ընդարձակ իրաւաբանական օգնութիւն: Իրաւաբանները անգլիկ կարիք կայ Նախիջևանի գաւառում: Գիւղացիական ազգաբնակչութիւնը, որ ամենախաղաղ ժամանակներում էլ, շնորհիւ իր տգիւրդութեան, ստրկացած է ուժեղին, առնող-տանողին, յափշտակողին—այժմ մասնաւոր, սոսկալի գաղաւթութիւններին ենթարկված, աւելի սարսափահար, աւելի անօգնական դրութեան մէջ է:

Հարկաւոր են ոչ միայն բժիշկներ, հարկաւոր են անասնաբու և իրաւաբաններ:

Եւ ահա դարձեալ մի տանջող հարց, ուր են նրանք, ուր են մեր իրաւաբանները:

Որքան են գիտեմ, Նախիջևանում և նրա գաւառում այժմ գործում է միայն երգում-հալ հաւատարմաւոր պ. Պօմենտովսկին, որ արդէն մեծ աշխատանք է կատարել: Բայց նա, ի հարկէ, ամեն տեղ հասնել չէ կարող, բոլոր դիմողներին գոհացնելու հնարաւորութիւն չունի: Խոշոր գործեր շատ կան: Բայց միայն բոլոր գործերին նուիրվել չէ կարելի, պէտք է նկատի առնել, հոգացողութեան առաքելայ դարձնել և հարկեր ու մի մասը-մուծար գործեր, որոնք այնու ամենայնիւ, շատ կարևոր են ժողովրդի մարդկանց համար:—Չը մոռանանք որ մեր ժողովուրդը մասն անտեսութիւններով է աղքատ: Շատ անգամ մի փոքրիկ հանգամանք կարող է միանգամից տակն ու վրա անել գիւղական ամբողջ մի տուն:

Հարկաւոր է իրաւաբանական օգնութիւն:

Հայ իրաւաբանների դասակարգը պակաս պատասխանատուութիւն չունի հասարակական խղճի առաջ, քան բժշկական դասակարգը:

Մամուլը շատ ու շատ անգամ է գանգատվել որ հայ իրաւաբանները ոչինչ չեն անում ժողովրդի համար: Բացառութիւններ ամեն տեղ կան, բայց ընդհանրութեան վերաբերմամբ այդ գանգատը իրաւացի է:

Եւ ահա նոյն այդ անտարբերութիւնը այժմ էլ մեր աչքի առջև է, երբ դրսում կայ գործելու, ժողովուրդը փրկելու այնքան մեծ կարիք...

Ո՛չ հայ ինտելիգենցիան իր բոլոր ճիւղերով կամենում է ապացուցանել որ իր և ժողովրդի մէջ օտարութեան ահագին վիճակ...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մեզ հաղորդում են, որ ներկայ յուլիս ամսվայ ընթացքում տեղի կունենան յատուկ խորհրդակցութիւններ գեմատօի մասին: Խորհրդակցութիւնների նպատակը պէտք է լինի պարզել մի քանի հիմնական հարցեր ընտրողական գործի վերաբերութեամբ. կարևոր է մշակել ընտրողական ցնդի չափը նկատ առնելով մեր երկրի հանգամանքները: Խորհրդակցութեան կը հրաւիրվեն մեր երկրի պայմաններին և գեմատօի գործին ծանօթ անհո:

«ԴԱՅԵԱՅԵ» լրագրի մէջ կարդում ենք. «Յուլիսի 2-ին Օլգինսկայա փողոցի ծայրում պատրուկը կանգնեցրեց մի կառք, որի մէջ գնում էր մի հայ երիտասարդ, ձեռքին բռնած մի դամբիւր: Այդ դամբիւրը քննելուց յետոյ, երեսը դրա մէջ 17 աքսնաձուկ, որի համար և հային իսկոյն տարան ոստիկանատուն: Խուզարկութեան հնթարկելով նրա մօտ գտան, հազուադէպ տակ շորերի մէջ թաքցրած տարածանակային 4000 փամփուշտ: Զերբակոված հայը ասաց, թէ զէնքերը և թէ փամփուշտները ինքը ստացել է Բէլիլ գլուխնում մի անծանօթ մարդուց: Իսկոյն և եթ այդ խառնութիւն, որ գտնվում է ռազմավարական ճանապարհի վրայ, Թիֆլիսից 7 վերստ հեռու, կողակները ուղեկցութեամբ ոստիկանական ծառայողներ ուղարկեցին, որոնք այնտեղ կալանաւորել են և 4 մարդու և խիստ հակողութեամբ բերել Թիֆլիս: Նրանց մօտ գտել են նաև 5 տարածանակ և մօտ 2 պուրդ տարածանակային փամփուշտներ:

Ստացանք Մօսկվայի ռուսաց հնագիտական ընկերութեան Կովկասեան բաժնի առաջին տեղեկագիրը, որի մէջ տպված են բաժնի ընդհանուր ժողովների արձանագրութիւնները, սկսած 1901 թ. մարտի 21-ից մինչև 1902 թ. դեկտեմբերի 3-ը: Բայց դրանից տեղեկագրի մէջ տպված են և ընկերութեան անդամների կարգացած զեկուցումները, որոնցից շատերը վերաբերում են հայկական և վրացական հնութիւններին: Դիտարկալէս աչքի են ընկնում Ե. Տակաշվիլու զեկուցումները. բացի դրանցից կան ապված և Ա. Գալանթարի զեկուցումը «Ջաբարիա ազուրեցու յիշատակագրի» մասին և Բ. Նաւասարդեանի զեկուցումը Ա. Երեցեանի մասին. տեղեկագրի մէջ տպված կան և բազմաթիւ նկարներ, որոնք լուսաբանում են բնագրիները:

Մեր խնդրում են յայտնել, որ Պարսկաստանի Ղազվին, Ռաշտ և Էնզելի քաղաքները հայոց երկհեռ դպրոցների համար նոր ուսուցչական խմբի ընտրելու և կազմելու իրաւունքը վերոյիշեալ քաղաքները հազարաքանութիւնները յանձնել են Թեհրանի հայոց դպրոցներին տեսուչ պ. Լ. Բաբայանին, որին և ցանկացողները կարող են դիմել:

Րոցներին տեսուչ պ. Լ. Բաբայանին, որին և ցանկացողները կարող են դիմել:

Մենք յայտնել էինք, որ Ալեքսանդրօպօլի գաւառում բացված էր ժամանակաւոր կաթնատնտեսական մի դպրոց Մեծ Արխիլի գիւղում: Դպրոցում կային մինչև 24 յաճատը, որոնք գործնականապէս ուսումնասիրում էին իւզագործութիւն, սովորողների մեծ մասը պատկանում էր գիւղական դասակարգին: Դպրոցի դասընթացը շարունակվեց մի ամիս: Լուր և են, որ հետևեալ դարձան մեր երկրի յարմարաւոր տեղերից մէկում դարձեալ կը բացվի ժամանակաւոր մի այդպիսի դպրոց կաթնատնտեսութիւն սովորել ցանկացողների համար:

ՎԱՄԻԿԱՎԱՅԱԶԻՑ մեզ գրում են. «Հիւսիսային Կովկասն ևս ապառ չը մնաց մարերի յուզմունքից: Վարդկավկազ, Ղազար, Մօզգոկ, Պետալիօքսկ, Կիսլուօքսկ—ահա այն վայրերն, ուր փորձեց երևալ նաև իր այլանդակ կերպարանքով, սակայն ամեն տեղ էլ ամօթաւոր մնաց: Իսկ յունիսի 22-ի ժողովն եկաւ այդ պարտութիւնն աւելի կատարեալ դարձնելու: Պարսից փոխ հիւպատոսարանուսն էր այդ ժողովը. ներկայ էին ներկայացուցիչներ հայերից, պարսիկներից, օսերից, ինգուշներից, լեզգիներից, Կազանի թուրքերից. ընդամենը մօտ 50 հոգի: Քննվում էին Բազում ու Երևանի շրջանում տեղի ունեցած դէպքերը. առաջարկվում էին միջոցներ դաւաւոր բարեկամութիւնն աւելի ամրացնելու համար: «Հայ ու թուրք, ասում էր փոխ-հիւպատոս-Դաւուդ-խանը, անբաժան բարեկամներ են: Անկէ առանց միւսի ապրել չէ կարող»: «Օսէտիայի իւրաքանչիւր գիւղում, պնդում էր ծերունի գնդապետ Շանալը, դուք հայ կը տեսնէք. և նրանք մեզ համար թանգ հիւրեր են. նրանց զլխից մազ չի պակսիլ. մեր լեռները հանգստութիւնը են երաշխաւորում մեզ: Եւ նոյն քանն էր կրկնում իւրաքանչիւր ներկայացուցիչ: Խօսվեց և այն հարցի մասին, թէ ինչպէս շատ լրատուներ սուտ ու չափազանցած լուրերով մոլորեցնում, գրգռում են հասարակաց կարծիքը: Այնուհետև ժողովը միաձայն որոշեց. 1) ընդունել պ. հիւպատոսի կազմած կողմ բոլոր ազգերին և ապագրելով հայերէն, ռուսերէն, թուրքերէն և տարբերէն լեզուներով, ցրվել է. Կովկասում. 2) ընտրել իւրաքանչիւր ազգից 3—4 դատաւորներ, որոնց պարտքը կը լինի արթուն կերպով հսկել և իւրաքանչիւր թիւրքմասութիւն տեղի ու տեղը խղճել: 3) համեմատելով իրան կարեւորութեան մասին խօսակցի եկեղեցիներում, մէջիդներում և առհասարակ ժողովներում ու իւրաքանչիւրն իր շրջանում, 4) ժողովականների երախտագիտութիւնը յայտնել պարսից կառավարութեանը, որ ներկայ ժողովին նախաձեռնողն էր: 5) ժողովի և նրա որոշման մասին յայտնել ի գիտութիւն Վիսափառ Կաթողիկոսին: Եւ թիւ օր է անցել ժողովի օրից և ընտրված դատաւորները 2 թիւրքմասութիւններ են վերացրել»:

ԵՒՊԱՏՈՐԻՍՏԻՑ մեզ գրում են. «Կիրակի յունիսի 26-ին հայոց դահլիճում սիրողների մասնակցութեամբ պ. Տիգրանը տուեց մի համերգ. Համերգը անցաւ բաւական աղոյ, բաղկացած էր երգերից և հայկական պարերից. պ. Տիգրանի երգած ազգային երգերը հանդիսանալով վաւ ապաստարար տպաւորութիւն թողնեց: Բայց ցաւելով պէտք է նկատել, որ դահլիճը կիսով չափ դատարկ էր: Այստեղ պէտք է շնորհակալութեամբ շնորհակցել Զորիսի մէջ Բախալեանի եռանդը, որ իր մասնակցութեամբ փայլ տուեց և եկեղեցիին և արժանացաւ ծափահարութեան հասարակութեան կողմից: Յարգելի օրերը անգամ չէ, որ ցոյց է տալիս եռանդուն գործունէութիւն: Մուտք եղաւ 53 րուրի ծախք 15 րուրի, մնաց զւտարեղինք 38 րուր:

ԿՐԱՍՆՈՎՈՂՈՒՍԿԻՑ մեզ գրում են. «Յունիսի 23-ին մի այդպիսի թուրք երկկողեան ժամը 7-ին հե է հե պատելով թուրքերի խանութները առաջարկում է շուտով կողպել խանութները, տարածելով որ հայերը «բռնադատ» սկսել են, արդէն վերստ կոտորում են և այս օրակէս պիտի «բռնա» ձգեն: Թուրքերը մի տնիթարվում կողպում են խանութները և պատասխարվում իւր քանիւր իր տունը: Շատերը իրանց ընտանիքները փոխադրում են ծանօթ ուս ընտանիքներ: Միւս օրը մի ճանապարհների և թուրքերի բարիմասց մասը վաճառականների և թուրքերի անհիմն հաւաքվելով և ընկնելով այդ թուրքեր անհիմն

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ք64.